# Հ Ր Ա Մ Ա Ն N 177-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

**«18» ՄԱՅԻՍԻ 2020 Թ.** **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 12-34.2-Ղ2-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով և 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը և Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի (ծածկագիր՝ 12-34.2-Ղ2-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 15-ի եզրակացությունը ու Կ. Կարապետյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կարեն Հովհաննեսի Կարապետյանին 2020 թվականի մայիսի 19-ից, 12 ամիս փորձաշրջանով, նշանակել Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի (ծածկագիր՝ 12-34.2-Ղ2-1) պաշտոնում:

2. Կ. Կարապետյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ (ծածկագիր՝ 12-34.4-Ղ2-1) Էմիլ Մարգարյանին:

3. Աշխատավարձը սահմանել՝ 377 659 ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5/19/2020

X 

Rustam Badasyan

**ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ**